

**Հետաքրքրության արտահայտման  
հրավեր խորհրդատվական ծառայությունների մատուցման համար**

<b>Երկիր՝</b> <b>Ծրագիր՝</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b> <b>Համայնքների Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ (ՀԳՌԿՄ 2-րդ) ծրագիր</b> <b>P133705</b>
<b>Ծրագրի համարը՝</b> <b>Վարկի/Փոխառության համարը՝</b> <b>Նշանակման անվանումը՝</b>	<b>Վարկ No.8374-AM, Փոխառություն No.5504-AM և No.5505-AM</b> <b>«Արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվների (ԱՄՍԿ) անդամների և տնօրինության, վարչության և համայնքի արտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման հանձնաժողովի (ՀԱԿԱԶՀ) անդամների համար ուսուցման ծառայություններ</b>
<b>Հղման համարը՝</b>	<b>CARMAC2-CP-CS-16/02 /ըստ Գնումների պլանի/</b>

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը Համաշխարհային բանկի կողմից ստացել է վարկ «Համայնքների Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի (ՀԳՌԿՄ 2) իրացման նպատակով և նախատեսվում է այդ գումարների մի մասով իրականացնել «Արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվների (ԱՄՍԿ) անդամների և տնօրինության, վարչության և համայնքի արտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման հանձնաժողովի (ՀԱԿԱԶՀ) անդամների համար ուսուցման ծառայությունները:

2. Խորհրդատվական ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ) ներառում են՝ ՀՀ չորս մարզի (Արագածոտնի, Լոռու, Կոտայքի և Շիրակի) 18 գյուղական համայնքներում իրականացնել ուսուցումներ՝ ստորև նշված թեմաներով.

ա) Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի վերաբերյալ իրազեկում և գիտակցության բարձրացում:

բ) Արտոգտագործողների կոոպերատիվների անհրաժեշտությունը, կոոպերատիվի ստեղծման և շարունակական հաջողության համար անհրաժեշտ հիմնական սկզբունքներն ու պայմանները, ինչպես նաև Ընդհանուր Ժողովի իրավասությունների շրջանակը, կոոպերատիվի նախագահի, անդամների իրավունքներն ու պարտականությունները:

գ) Կոոպերատիվի կառավարման և ղեկավարման սկզբունքները՝ կոոպերատիվի վարչություն՝ անդամների իրավունքներն ու պարտականությունները, որոշումների կայացման և աշխատանքային պարտականությունների բաշխման կարգը:

դ) Կոոպերատիվի ֆինանսական կայունության սկզբունքների գիտակցում, աշխատանքային պլանի և բյուջեի կազմում, ներառյալ՝ ծախսերի և տարբեր աղբյուրներից եկամուտների հաշվառում ու նախագծում: Ֆինանսական տեղեկատվության ու գործարքների հաշվառման հաշվապահական հիմունքները, հաշվապահական որոշումների կայացման հրապարակայնություն:

ե) Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործումից ստացված ծախսերի և վճարների հաշվարկման ու վերահսկման պատշաճ համակարգ:

զ) Արտավայրերի արդյունավետ կառավարում, արտային տարածքների բարելավում, արտադրողականության բարձրացում ու պահպանում: Արտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլանների (ԱԿԱԶՊ) հիմնական դրույթների, պարտականությունների գիտակցում:

է) Դեգրադացված և խիստ դեգրադացված արտավայրերի վերականգնման մեխանիզմները՝ խուսափելով արտային տարածքների և այլ բնական ռեսուրսների բնապահպանական դեգրադացումից:

ը) Արտավայրերի կառավարման և պաշտպանության իրավական կարգավորում, ներառյալ՝ արտավայրերի օգտագործման արդյունքում բնապահպանական վնաս պատճառելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները:

թ) Կոոպերատիվի և համայնքի շրջանակում սոցիալական երաշխիքների գիտակցում, ներառյալ՝ կանանց և երիտասարդների ընդգրկվածության խրախուսում, հատկապես կոոպերատիվում որոշումների

կայացման գործընթացում, դժգոհությունների բավարարման մեխանիզմի և տարաբնակեցման քաղաքականության շրջանակների գիտակցում:

Բացի այդ, ԱՄՄԿ շուրջ 2100 անդամներին պետք է տրամադրվի տարեկան աշխատանքային պլանի և բյուջեի նախագծի մեկական օրինակ և տեղեկատվություն վերը նշված փաստաթղթերի կազմման վերաբերյալ:

Մարզային ուսուցման ավարտին խորհրդատուն պետք է կազմակերպի ավարտական ստուգարք 72 անդամի համար՝ ստացած գիտելիքների վերաբերյալ:

3. Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2016թ. հոկտեմբերից և ավարտել 2016թ. դեկտեմբերին:

4. «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ԳԾԻԳ ՊՀ) հրավիրում է այդ բնագավառում համապատասխան որակավորմամբ և փորձով մասնագիտացված տեղական կազմակերպություններին ցուցաբերել իրենց շահագրգռվածությունը մարզերում ուսուցում իրականացնելու համար:

5. Շահագրգիռ խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա իրավաբանական անձի կարգավիճակ, նմանատիպ աշխատանքների իրականացման առնվազն 3 տարվա փորձ: Պետական և միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքային փորձը՝ առավելություն է: Խորհրդատուն պետք է ունենա նշված աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ մասնագիտացված աշխատակազմ, անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և ծրագրային ապահովում: Խորհրդատուի աշխատակազմը (աշխատանքային խումբը) պետք է բաղկացած լինի՝ Ղեկավարից, Աշխատանքների համակարգողից, Իրավաբանության մասնագետից, Բնապահպանության մասնագետից, Մարզագետնաբան մասնագետից, Տնտեսագիտության մասնագետից, Հաշվապահ-ադիտոր մասնագետից:

6. Կարճ ցուցակի ընտրության չափանիշները հետևյալն են՝ (i) կազմակերպության հիմնական գործունեություն և ընդհանուր փորձ – 40 միավոր, (ii) նմանատիպ աշխատանքների կատարման փորձ – 60 միավոր:

7. Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային Բանկի ուղեցույցների 1.9 կետին. ՎՋՄԲ վարկի և ՄՋԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում Համաշխարհային Բանկի Վարկառուների կողմից, հունվար 2011 («Խորհրդատուների ընտրության ուղեցույց»), որտեղ մասնավորապես նշվում է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

8. Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Խորհրդատուների ընտրության ուղեցույցով սահմանված Խորհրդատուների Որակավորման վրա հիմնված ընտրության ընթացակարգով:

9. Լրացուցիչ տեղեկություններ կարող են ձեռք բերվել ստորև նշված հասցեում, աշխատանքային օրերին, ժամը 10:00-ից մինչև 17:00:

10. Հետաքրքրված կազմակերպությունները պետք է հայտնեն իրենց շահագրգռվածության մասին և ներկայացնեն համապատասխան որակավորման մասին տեղեկություններ (գովազդային և տպագիր նյութեր, կատարված աշխատանքների նկարագրություններ, տեղեկություններ փորձի և աշխատակազմի մասին) ԳԾԻԳ ՊՀ գնումների բաժին մինչև 2016թ. սեպտեմբերի 22-ը: Փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ստորև բերված հասցեով.

Երևան, Կոմիտաս փող. 54 Բ, 3-րդ հարկ:

Հեռ. 297301, 297302; ֆաքս 297308;

Էլ-փոստ. info@arspiu.com